

«ԹՈՂ ՏՈՒՔԻ ԲԱՆԵՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ԳԱՆ» : ԴՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ա Ր Է .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ՄԱՐՏ 4 . 1876 .

ԹԻՒ 3



ԱՆՈՐ ՅՈՒՅՈՒՅ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԲՈՆԵԼՈՒ Է

անոր ցուցուց թէ ասեղները ինչպէս բռնելու է, և փոքր խրատ մը տուաւ անոր : «Ես ալ տպագրապետին պիտի ըսեմ որ այն խրատը տպէ, որպէս զի բոլոր տղայք կարենան զայն կարգաւ : Հաճի խաթուն Սըբուհին ըսաւ . «Գժուար է, բայց այս աշխարհի մէջ օգտակար բան մը չկայ որ առանց դժուարութեան եղած ըլլայ : Եթէ ատաղձագործք շատ չաշխատէին, մեր ասուները ոչ պատուհան և ոչ դուռ կ'ունենային . եթէ որմնագիրները շատ չաշխատէին, մեր ասուներուն պատերը չէին շինուեր : Եթէ հացագործը շատ չաշխատի, դուռն ուտելու հաց չես կրնար գտնել : Եթէ աղօրէպանը շատ չաշխատի, հաց չինելու ալիւր չգտնուիր : Եթէ երկրագործը շատ չաշխատի, ալիւր աղալու ցորեն չգրանուիր : Եթէ քու հայրդ ու մայրդ շատ չաշխատին, հաց և տուն չինող մարդոց տալու ստակ չի գտնուիր : Գործք ծանր ըլլալուն համար մի դադրեցներ զայն, այլ քաջ եղիր, և յարասէ : Այն ատեն ազէկ կրնաս ընել ինչ որ ընել կ'ուզես : »

Տղայց Աւետարեի համար

ԳՈՐԾ ԼՄՆՅՆԵԼՈՒ ԿԱՆՈՆԸ
Սըբուհի գուրպայ հիւսելու կ'աշխատէր, բայց մէկէն գուրպան ձեռքէն վար ձգեց, և իր մեծ մօրը, «Այս գործը դժուար է, չեմ կրնար ընել» ըսաւ : Հաճի խաթուն, «Գիտեմ որ դժուար է, բայց երբ հիւսել սորվիս այն ատեն պիտի կրնաս գուրպայ

չինել» ըսաւ : Սըբուհի ըսաւ . «Կ'ուզեմ գուրպայ շինել սորվիլ, բայց այս մեծ գուրպան շինել չեմ ուզեր : Չպիտի կրնամ երբէք զայն ըմբոսել . դերձանը շատ անգամ ասեղներէս գուրս կ'ելլէ, և մինչև որ կարգ մը ըմբոսեմ, շատ ժամանակ կ'անցնի : » «Հոս եկուր,» ըսաւ հաճի խաթուն Սըբուհին, և

ԲԱՐԻՔԻ ՓՈՒՍԱՐԷՆ ՉԱՐԻՔ

Սեզրաք անգամ մը Չուրն իյնալով խեղդուելու մօտ էր, երբ այն ճամբէն անցնող մարդ մը անոր այս վիճակը տեսնելով Չուրը նետուեցաւ և զանի ազատեց : Այս դէպքէն ետքը Սեզրաք ուր որ կը տեսնէր այն

մարդը, անոր ետեւէն կը վազէր, անոր անարգական անուաններ կու տար և զանի կը քարկոծէր:

Սեղբարայ համար, « Ինչպիսի չար և ապերախ աղայ էր, » պիտի ըսէք անտարակոյս, բայց թիշ մը համբերեցէք: Դուք ալ կորսուած չէիք: Եւ Յիսուս չմեռաւ: Վճեղ ազատեալու համար: Այժմ դուք ինչպէս կը վարուիք անոր հետ: Չանի կը սիրէք, անկէ չնորհակալ կ'ըլլաք, և ամէն կերպով կը ջանաք անոր հնազանդ ըլլալու: Այսպէս ընել ձեզ պէտք է, բայց ես կը վախնամ որ ձերնէ ումանք ալ ճիշդ Սեղբարայ պէս են, կը վախնամ որ դուք սուտ կը խօսիք, ձեր ծնողաց անհնազանդ էք, և չէք սիրեր Յիսուս ձեր քայցը Փրկիչը, որ իր կեանքը ձեզի համար տուաւ:

Ալ մի վշտացնէք ձեր Փրկիչը, այլ ճիշդ հիմա անոր գացէք և անկէ չնորհակալ եղիք: Խնդրեցէք անկէ որ ձեր մեղքերը ներէ, և օգնէ ձեզ իրեն փորձիկ ծառաներ ըլլալու:

Եթէ դուք պատրաստ ըլլաք, Քրիստոս ուրախութեամբ կ'ուզէ ձեզ օգնել:

Տղայոց Աւետարտի համար

ՎՏԱՆԳԱԻՈՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Վաճառական մը պարտաւորեալ էր անցնիլ շատ գող եղած ճամբէ մը, որոյ մտ ունէր բարեկամ մը, որ աւաղակաց վրայ մեծ ազդեցութիւն ունէր: Ասիկա երբ իմացաւ թէ վաճառականը իր օգնութեանը կը կարօտի, յօժարակամ գնաց որ զայն այն վտանգաւոր տեղէն անցունէ: Բայց յառաջագոյն ըսաւ վաճառականին թէ, « Չգուշացէք որ Բաշմալիք Կեռքի թէ և կեանքերնուդ վրաս չգար, ունեցածնէդ շատ բան կը կորսնցունէք »: Ապա վաճառականը կ'ելլէ ճամբայ, և կու գայ վտանգաւոր տեղը. և ահա աւաղակաց խումբ մը կը յարձակի անոր վրայ, որ քաջութեամբ կը դիմադրէր անոնց: Բարեկամը որ հեռուէն սարերուն գլխէն կ'երթար, երբ տեսաւ զայս, « Ո՛վ, գոչեց, ե՛ս քաջուեցէք, ես մի մօտենաք բարեկամիս »: Ուստի ցրուեցան մէկէն յերուզակը, և անցաւ ճամբորդն անվտանգ:

Այսպէս ալ Յիսուս, հոգիներուն բարեկամը, իւր ճամբորդ բարեկա-

մացն ըսաւ ի Գեթսեմանի. « Արթնն կեցէք և աղօթք ըրէք որ փորձութեան մէջ չիյնաք »:

Տղայոց Աւետարտի համար

ԵՐԿՈՒ ՃԱՄԲԱՆԵՐ

Սարգիս և Յովհաննէս անուն երկու երիտասարդներ խորհեցան իրենց հայրենիքը թողուլ և օտար երկիր երթալ: Ասոր վրայ խօսելով Սարգիս Յովհաննէսին ըսաւ. « Քաղաքին ետեի կողմը գեղեցիկ ճամբայ մը կայ որ դէպ ի յարիմուտք կը տանի: Ճամբան ընդարձակ և մեծաւ մասամբ զառ ի վայր է, տեսարանը ակնհասաւոյ է, և ճամբուն երկու կողմը մը շատ ծառեր և ծաղիկներ կան: Թէ և լեցի որ այն քաղաքն ուր կը տանի այս ճամբան այնչափ աղէկ չէ, բայց այսպիսի գեղեցիկ ճամբէ մը գէշ տեղ ալ չերթուիր: Ես այս ճամբէն երթալ կ'ուզեմ: » Յովհաննէս ըսաւ. « Կ'ըսեն որ քաղաքին արեւելեան կողմն ուրիշ ճամբայ մը կայ որ կը տանի շատ գեղեցիկ տեղ մը: Կը պատմուի թէ ճամբան խորտուբորտ է, և ճամբուն մէջ կան այնպիսի տեղեր որ գրեթէ անանցանելի են. շատ և վտանգաւոր գետեր կան. բայց ես երիտասարդ ու զօրաւոր եմ, կրնամ հիմա ներգութեանց դիմանալ, որպէս զի երբ ձերանամ կարենամ բնակարան մը ունենալ այն գեղեցիկ տեղը: » Յովհաննէսին բարեկամները գովելին Սարգիսն և անոր ընտրած ճամբան, և ամէն կերպով ջանացին Յովհաննէսն համոզել որ իր մտքը փոխէ, բայց չի յաջողեցան: Երկուսն օրը հասաւ, Սարգիս գեղեցիկ և շքեղ զգեստներ հագած ճամբայ ելաւ. անոր բարեկամներէն շատերն ալ զայն յազարկելու և ճամբան գեղեցիկութիւնը վայելելու համար բաւական տեղ անոր հետ գացին:

Խեղճ Յովհաննէսը մինակ մեկնեցաւ, վտանգի մէկը չէր ուզեր անոր հետ այն գոտարին ճամբէն երթալ: Յովհաննէս գիմացիուն զգեստ հագած և դժուարին գործի մը պատրաստուած էր:

Սարգիս շատ զուարճալի գտաւ իր ճամբան, թէ և գէշ տեղեր ալ կային, բայց անոր բոլոր ընկերները միայն ճամբուն բերկրութեանց վրայ

կը խօսէին, և բան մը չըսուեցաւ այն քաղաքին վրայով ուր կը տանէր այն ճամբան: Յովհաննէս իր ճամբան աւելի գէշ գտաւ որչափ չէր կարծէր: Կային տեղեր ուր ճամբան առապար և գահալէժ էր, ուստի և Յովհաննէս շատ դժուարութեամբ կրնար քալել, յաճախ ճամբուն քովերն վայրենի գաղաններ կը տեսնուէին: Սակայն Յովհաննէս մեծ միտիմարութիւն ձր ունէր: Կարճ միջոցներու մէջ պահականոցներ կային, ուր կրնար հանգչիլ վաստակաբեկ ճամբորդը, և պահապաններն անոր կը ցուցնէին դժուար տեղերէն անցնելու ամենէն աղէկ ճամբաններն, և որչափ կարելի էր միտիմարութիւն և քաջալերութիւն կուտային անոր, և այն սակաւաթիւ ուղեկիցներն, որոց պատահեցաւ Յովհաննէս, անոր հետ կը խօսէին ճամբուն ծայրը գտնուած բերկրալի հանգստեան վրայով:

Վերջապէս Սարգիս շատ ցաւեցաւ երբ հասաւ ճամբուն ծայրի քաղաքը: Այն տեղը գողերով, սպանողներով, հայհոյիչներով, կիրակին աւրողներով և ամէն տեսակ հեթանոսներով լեցուած էր: Սարգիս չսիրեց այնպիսի ընկերութեան մէջ մնալ, ուստի միտքը դրաւ անկէ մեկնիլ, բայց տեղացիներն անմիջապէս զայն շրջապատելով բռնեցին և դերի ըրին: Ետքը խորհեցաւ ընկերանալ անոնց հետ, որոնք իրեն պէս բռնութեամբ հան վար դրուած էին. բայց անկարելի եղաւ չարբու ընկերութեանէն ազատիլ, վանդի ուր որ երթար այն չար մարդերէն մէկ քանին անոր քով կը գտնուէին: « Ո՛հ, » գոչեց. « երանի՛ թէ անգամ մ'ալ հայրենիքս և հօրս տունը տեսնէի. Թնչու ես այս ճամբան եկայ: Ո՛վ պիտի ըսէ բարեկամաց որ այն խարոյ ճամբան չմտնեն: Վայ ինձ, վայ ինձ: »

Իսկ Յովհաննէս իր տաժանելի ճամբորդութիւնը վնցուցած և ամենագեղեցիկ տեղ մը հասած ըլլալով կ'ըսէր. « Երանի՛ թէ բարեկամներս ալ հոս ինձի հետ ըլլային: » Յովհաննէս չուտով մոռցաւ ճամբուն նեղութիւնները:

Կարճեմ թէ միտքս հասկցաք: Չենէ ամէն մէկուն առջև երկու ճամբայ կայ. ձեզ կը մնայ ընտրել թէ որ ճամբէն պիտի երթաք (Մատթ. է. 13, 14):



ԵՆԵԳՆԵՐՈՎ ԶՈՒՐ ԿՐԵԼԸ

ԵՆԵԳՆԵՐՈՎ ԶՈՒՐ ԿՐՈՂ, ՄԱՐԳԻԻԿ

Թեև ևս ձեռնէ ոմանք տեսած են գոյլագործը որ գոյլին քովերը շինելու համար, նախ տախտակէ շերտեր կը կտրէ և անոնց եզերքը կ'սղորկէ, և ներսի կողմը կը կտրցնէ դանակով մը որ դգալի մը կը նմանի, յատակն ալ անցունելու համար իւրաքանչիւր շերտի փոքր ծայրը խոռոչ մը կը պտտրատտէ և բոլոր մասերը մէկտեղ բերելով երկաթեայ շրջանակներով զանոնք իրարու հետ կը կապէ: Երբ երկաթեայ ունկունք (շուէ) ալ աւելցնէ, գոյլը լմնցած կ'ըլլայ: Գոյլ շինելն ալ արուեստ է, մանաւանդ այնպիսի գոյլ շինել որուն մէջ ջուրը կարենայ մնալ: Վայրենի ցեղեր, որոնք գոյլ շինելու արուեստը չգիտեն, շատ դժուարութիւն կը քաշեն ջուր կրելու ամաններ գտնելու համար: Այն տեղերը ջուր կրելու համար կաշի, կողով, դգուճ, խնցի և ուրիշ բաներ կը գործածեն. և Մատակասագարի մէջ ալ եղէգ կը գործածուի: Այս նպատակին համար որոշուած եղէգներն ամէնէն մեծ տեսակի եղէգներն են: Մարդիկ այն եղէգներէն իրրև երկու կանգուն երկայնութեամբ կը կտրեն և մէջը կ'ողորկեն. ապա կանայք այն եղէգներն իրենց ուսերն առած ջրհորը կ'երթան և ջուր կը բերեն: Վերի պատկերը կը ցուցնէ թէ Մատակասագարի կանայք իրենց եղէգները ջրով լեցնելէն ետքը զանոնք ինչպէս տուն կը տանին:

Տղայոց Աւետարանի համար

ՍՈՒՐԲ ԳԻՐԳ ԿԱՐԳԱՅՈՂ ՓՈՒՐ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Խումբ մը տարօրինակ մարդիկ գետի մը եզերքն ի վեր կ'երթան: Այս մարդիկ ամէնքն ալ խոշոր նիւթէ մը շինուած միևնոյն տեսակ զգեստ հագած են, և այս զգեստէն յայտնի է թէ անոնք գործով կամ համակրութեան կապով իրարու հետ կապուած են: Անոնցմէ մին կը թուի թէ այն խումբին

գլուխն է, և բոլոր խումբն անոր շուրջը կը խոռնին, ինչպէս փոքր տղայք սիրելի հօր մը շուրջը կը ժողովին. սակայն այն մարդը միւսներէն աւելի տարևոր չեղևիք, ինչու որ դեռ նոր թեւակոխած է այրութեան հասակը: Գետին քովը կը հանին, և անոր անտառախիտ եզերաց վրայ կանգ կ'առնեն: Հոն անոնցմէ իւրաքանչիւրը տապար մը կը հանէ և ծառ մը ընտրելով կը սկսի զայն կտրել: Տապարի հարուածները մէկմէկու կը յաջորդեն արագ արագ, և ծառերը կը սկսին տապալիլ, այս միջոցին գործառ որոց մէկն աղաղակ մը կը հանէ և կը վազէ դէպի գետն, իբր թէ ջուրին մէջ նայել կ'ուզէ: Բոլոր մարդիկ անոր շուրջը կը ժողովին, և ջուրին մէջ նայիլ կը սկսին: Խումբին առաջնորդը ծառէ մը ճիւղ մը կտրելով զայն գետին մէջ կը նետէ: Այն երիտասարդն որ աղաղակ բարձած էր, վար կը ծռի և ջրոյ մէջն բան մը կ'առնէ, որ կարծես թէ զանի կը մտիթարէ և որուն վրայ միւսները կը զարմանան:

Ո՞վ էին այս խումբ մը մարդիկ. ո՞վ էր անոնց առաջնորդը. ի՞նչ էր գետին անունը. այս պատմութիւնը Սուրբ գրոց մը մասին մէջ կը գտնուի:

ՀՍԻ ԵՒ ԻՐ ԶՄԳԵՐԸ

Ստեփան կօշիակարի աշակերտ էր և իր վարպետին տունը կը բնակէր: Կօշիակարին կինն, որ Էֆթիք հանրմ կը կոչուէր, Ստեփանը բնաւ չէր սիրեր, օր մը մանաւանդ շատ բարկացած էր Ստեփանի դէմ, վասն զի իր հաւերէն մէկն անյայտ եղած էր, և

Էֆթիք հանրմ կը կասկածէր թէ Ստեփան գողցաւ հաւն և տարաւ իր մօրը, որ շատ աղքատ և ծեր կ'ին մ'էր ու բլուրին վրայի գիւղը կը բնակէր: Ստեփան բաւական աղէկ տղայ էր, հաւ և ուրիշ բան ամենին չէր գողնար. խեղճ տղան շատ տակն ու վրայ եղած էր որ Էֆթիք հանրմ զինքը գողի տեղ կը դնէր: «Ասկէ պիտի ելեմ երթամ» ըսաւ օր մը Ագապի հանրմին, որ դբացիներէն մէկն էր: «Ո՞ր պիտի երթաս», ըսաւ անոր Ագապի հանրմ: «Ուր ալ ըլլայ պիտի երթամ հոգս չէ, այլևս չեմ կրնար մնալ այնպիսի տան մը մէջ ուր զիս գող կը բռնեն» ըսաւ Ստեփան: «Ճամբու ծախքի համար ստակ և անցագիր ուսիլց պիտի առնես», հարցուց անոր Ագապի հանրմ: «Առանց ստակի պիտի երթամ» ըսաւ Ստեփան: «Ո՞չ, չես կրնար երթալ», ըսաւ Ագապի հանրմ. «մանաւանդ ըրածդ խենդութիւն է: Համբերելու ես մինչև որ ապացուցանես թէ դուն գող չես» «Բայց չեմ կրնար ապացուցանել» ըսաւ Ստեփան. «Էֆթիք հանրմ կը կարծէ թէ ես գող եմ. ի՞նչ կրնամ ընել անոր: Ես կը կարծեմ որ հաւն




ԿՈՐՍՈՒԱՍ ԶԱՒԵ ԽՈՒՍԲ ՄԸ ԶԱԳԵՐ ԿԸ ՆԱՅԵՐ

Էֆթիք հանրմին աղեղ դէմքէն զարհուրեցաւ դնաց. բայց ասի ինչպէս կրնամ ապացուցանել, և չեմ ուզեր այլ ևս մնալ այս տան մէջ ուր ինձ այնպէս կը նային իբր թէ աշխարհիս ամենէն մեծ մեղաւորն եմ» «Այդչափ խենդ մ'ըլլար», ըսաւ Ագապի հանրմ. «Եթէ դուն ասկէ փախչես, ամէն մարդ պիտի խորհի թէ յանցաւոր ես. բայց երբ հոս մնաս և գործդ շարունակես, Տէրը ժամանակաւ պիտի ցուցնէ թէ դուն անմեղ ես» «Ես չեմ կարծեր որ Տէրը ինձի համար այդպիսի բան ընէ» ըսաւ Ստեփան, և ներս մտնելով իր գործը շարունակեց:

Երկու շաբաթ ետքը, առաւօտ մը կանուխ Ստեփան Ագապի հանրմին

ձայնը լսեց որ մերձակայ պարտէզի մը մէջէն զինքը կը կանչէր: Ստեփան պատուհանին առջևը գնաց և չորս կողմը նայելով տեսաւ Ազապի հանրմը և կորսուած հաւն որ խումբ մը ձագեր ետևը ձգած խորխառնօք կը նայէր: «Տէրը քու անմեղութիւնդ ապացուցանելու համար հոգ տարա՛ւ, թէ ոչ» ըսաւ Ազապի հանրմ: Ստեփան այն ատեն հասկցաւ որ Տէրն իր վրայ իր արժանիքէն աւելի հոգ տարած էր. և վաղեց Էֆթիբ հանրմը կանչելու որպէս զի անոր ցուցունէ թէ հաւն ինչպէս պահուրտած էր, որ իր հաւկիթները թխսէ: Այն օրն բարեյաջող օրերու սկիզբ եղաւ Ստեփանին համար, վասն զի Էֆթիբ հանրմ տեսնելով որ անոր հետ յանրաւ խիստ վարուեցաւ, այնուհետև սկսաւ անոր հետ վարուիլ իբրև իր զուակին հետ:



ՄՈՎԸ ՆԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԵՌՆ ԵԼԱՆ

Մեր Տէրը՞ Յիսուս Քրիստոսի ատեն շատ մեծ քաղաքներ կային այնուհերը: Մարկոսի հայրն անոր ցցուց Տիբերիան որ ծովին միւս կողմն է, և Մէճաէլ անոնց մօտ էր ջուրին այն կողմը ուր մեր ճամբորդները կեցած էին: Իրենց կեցած տեղէն այս երկու քաղաքները միայն կրցան տեսնել:

և հովը դադարեցան, ճամբորդները դարձեալ ժողովեցին իրենց բաները, և Մարկոս պատրաստ էր խահուէ խմելու: Մօվը նայելու համար լեռն ելան, որուն ստորտան իջած էին: Գալիլիոյ ծովին ջուրն վճիտ և անուշ է, բայց անոր վրան հիմա նաւակներ չկան և եղերքն ալ քիչ գիւղեր կան:

Ս.յս ծովն այն է ուր առաքեալք ձուկ կ'որսային, ուր Պետրոս փորձ ըրաւ ջուրին երեսէն քալել, ուր մեր Տէրը փոթորկին սաստեց, երբ Մարկոս միտքը բերաւ այս բաները, շատ ուրախ եղաւ որ հայրը փոխանակ ծովէն երթալու որոշեց ցամաքէն շարունակել իրենց ճամբան:

ՄԱՐԿՈՍԻ ՀԱՄԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Մարկոսին հայրն անոր հարցուց. «Գալիլիոյ ծովը տեսնել կուզե՞ս»: Մարկոս, «Այո, այն ծովն ալ տեսնել կ'ուզեմ» ըսաւ: Ուստի որոշուեցաւ որ նազարեթէն դէպի հիւսիս ծովին եղերքն ի վեր երթան: Մարկոսի հայրը խորհեցաւ նախ Տիբերիա երթալ, բայց լսելով որ Տիբերիա անշուք և ողորմելի տեղ է, ալ չուզեց հան երթալ: Արարացիք կ'ըսեն թէ լուերուն թագաւորին արքունիքը Տիբերիոյ մէջ է, և արդարև այն տեղն այնչափ անմաքուր է, որ իրաւացի կը հանէ Արարացուոց այս խօսքը: Մարկոս և անոր հայրն այն սովորական ճամբէն կ'երթային, ուսկից կ'երթան ընդհանրապէս Գամասկոսի կարաւանները, և Մէճէլ քաղաքին քով Գալիլիոյ ծովեղերքը հասան: Հոն Անգղիացի ճամբորդներու հանդիպեցան, որոնք Մարկոսի հայրը հրաւրեցին գիշերն իրենց վրանը անցնել: Ըաշէն ետքը երկայն խօսակցութիւն եղաւ, և Մարկոս շատ զարմանալի բաներ լսեց այն մարդոց պտտած երկիրներուն վրայով, ետքը բոլորն ալ քնացան: Արևը ծագելէն ժամ մը առաջ Մարկոս արթննալով տեսաւ որ անձրև կու գար և հովը կը փչէր: Անգղիացիք ելած էին և վրանին ցիցերը պնդելու կ'աշխատէին: Բայց մէկէն սաստիկ հով մը ելաւ, և վրանը թևեր ունեցող թռչնոց մը պէս թռաւ և վրանին մէջէն վերմակներն, Անգղիացուոց գլխարկներն և լրացիներն ամէնքն ալ կը տարուէին աշնանային տերևներու պէս: Անձրևը շուտով թրջեց Մարկոսը, որ այն կէտին շատ կը փափաքէր տունը ըլլալ: Սակայն անձրևէն թրջելով մարդ չմեռնիր. քիչ մը ետքը օդը բացուեցաւ, անձրևն

ՀՈՍ ԶԻՔ ՀԱՆԳԻՍ

Ամբ

1. Ա. Իբրը պանդուխտ յաշխարհ կը մտնաւ իմ, Հոս չիք հանգիստ, Հոս չիք հանգիստ.
 Բ. Իբրը մամբարդ— երկրիս վրայ կը շարչիմ, Բայց կ'օրհնուիմ, Բայց կ'օրհնուիմ— Էիմ.
 Գ. Սիրոս կը հըր-ձուի լը-սե- լով Փրկչին ձայն, Հոն կայ հանգիստ, Հոն կայ հան- գիստ.
 Դ. Աչքս եմ տըն-կած այն փա- ոս-ւոր օր-ուան, Երբ մեզքն ու ցան պիտի ան- հե-տա-նան

2 Հոս նեղութիւնք եւ վըշտեր խիստ դառն են,
 Հոս չիք հանգիստ, հոս չիք հանգիստ.
 Հոս կը թողու՛մ բարեկամքս ամէն,
 Պէտք է երթամ յիմ հայրենիք:
 Ո՛հ, սրչափ քաղցրէ խոստումն Յիսուսին,
 Թէ օրհնեալ են ոյք ի Տէր նեղեցին.
 Արժանացան փառաւոր վիճակին.
 Հոն կայ հանգիստ, հոն կայ հանգիստ:
 3 Իբր անապատ է աշխարհս վշտալից,

Հոս չիք հանգիստ, հոս չիք հանգիստ.
 Հոս վարած կեանքս է կեանք մեղ- սալից,
 Փրկչիս արիւն կը քաւէ զիս:
 Շուտ չարիքէն պիտ'ըլլամ ազատեալ,
 Շուտով պիտ'ըտուիմ յախտեանս օրհնեալ.
 Շուտ պիտ'երթամ Յիսուսի գիրկն իյնալ.
 Հոն կայ հանգիստ, հոն կայ հանգիստ:
 Թարգմանեց Անգղիականէն
 ՄԻՆԱՍ Մ. ԳԵՈՐԳԵԱՆ

ՓԵՏՐՈՍԻ ՀԱՐՅՄԱՆ ՊԱՏԱՍԻԱՆ
 Քաղաքին անունն էր Երուսաղէմ, թագաւորն էր Եգեկիա, քաղաքը պաշարող բանակն էր Ասորեստանեայց բանակը, զոր անոնց Սենեքերիմ թագաւորը զրկեց: Դ թագ. ժԼ, ժԹ:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
 Խմբագիր Ծ. Բ. Կրին
ՆՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
 Ձագմագնըլար, Յակոբեան խան, ԹԻԼ. 12.